

ՀԱՅԵՐԵՆԻ ԿԵՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԵՎ ՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

Գ. Բ. ԶԱՀՈՒԿՅԱՆ

Հայերենի կետադրությունը մշակվել է դարերի ընթացքում և, ինչպես տեական ուղի անցած ամեն մի ամբողջություն, ունի կիրառության տրամաբանորեն հիմնավորված և չհիմնավորված, համակարգման ժամանակակից սկզբունքներին համապատասխանող և չհամապատասխանող, համանվանական և համանիշային, պակասավոր և հավելուրդային տարրեր: Սրա հետ միասին միշտ չէ, որ համապատասխանություն է հղել քերականական ձևերին: Ներկայացված կետադրական նշանների և նրանց գործնական կիրառության միջև: Երկաթագիր տեքստերում մինչև X դ. գործածվող հիմնական նշանը հղել է կետը (արդի տեսքով՝ միջակետը), մինչդեռ Դիոնիսիոս Թրակացու «Քերականական արվեստ» աշխատության թարգմանության մեջ տրված է կետադրական նշանների մի ամբողջ համակարգ: Այստեղ տարբերվում են կետադրական երկու կարգի նշաններ՝ տրոհության («կէտք»), որոնք նպատակ ունեն բացահայտելու միտքը, և առգանության, որոնք նպատակ ունեն բացահայտելու «արվեստը»: Տրոհության նշանները երեքն են՝ «կէտ աւարտեալ», «միջակ», «ստորակէտ»: Առգանության նշանները բաժանվում են չորս տեսակի՝ «ոլորակ», «ամանակ», «հագագ» և «կիրք»: Սրանցից երկուսի՝ «ամանակի» և «հագագի» առանձնացումը պայմանավորված է հունարենի առանձնահատկություններով՝ երկար ու կարճ ձայնավորների հնչույթային տարբերությամբ և ճ հագագի արտահայտման եղանակով (ն-ն հունարենում առանձին տառով չի արտահայտվում, և նրա առկայությունն ու բացակայությունը տրվում են հատուկ նշաններով): Առգանության մյուս երկու տեսակներից «ոլորակի» մեջ միավորվում են առգանության բոլոր նշանները՝ շեշտը (´), բուխը (˘) և պարուկը (¨): «Կիրք» անվան տակ միավորվում են ապաթարցը, ենթաման և ստորատը. սրանցից նույնությամբ գործածվում է միայն ապաթարցը. ենթաման, որ հունարենից տարբեր տեսք ունի, պահպանվում է որպես տողադարձի նշան, ստորատը չի գործածվում (ավելի ճիշտ՝ խառնվել է ստորակետի հետ)¹:

Հայերենի կետադրության պատմության մեջ էական դեր են խաղում XII—XIII դարերը, որոնք նշանավորում են հալոց լեզվի զարգացման միջին շրջանի սկիզբը: Այս շրջանում ոչ միայն փորձ է արվում վերստին անդրադառնալու կետադրության հարցերին, Թրակացու աշխատության թարգմանության հիման վրա մշակելու հայերենի կետադրության հիմունքները, տալու տողադարձի հիմնական կանոնները, այլև փաստորեն հաղթահարվում է կետադրության տեսության և գործնական կիրառության խզումը. կիրառության մեջ են դրվում կետադրական այն բոլոր նշանները, որոնք մինչև այժմ էլ առկա են մեր գրության համակարգում: Այս բանը կապված էր ձեռագրերի զանգվածային ընդօրինակման և, այսպես կոչված «գրչության արվեստի» մշակման հետ: Արիստակեսը և Գեորգ Սկևոսցին, հետագայում նաև այլ հեղինակներ ղեկավարում են հայերենի ուղղագրության և կետադրության նոր-

¹ Н. Адонц, Дионисий Фракийский и армянские толкователи, Пг., 1915, с. 3, 38—41; Հմմտ. նաև Գ. Բ. Զահուկյան, Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում (V—XV դդ.), Երևան, 1954, Ա. Մ. Մուրադյան, Հունարան դպրոցը և նրա դերը հայերենի քերականական տերմինաբանության ստեղծման գործում, Երևան, 1971:

մավորման հիմքերը: Դեռ ավելին. եթե ուղղագրությունը 1922 թ. արմատական փոփոխության է ենթարկվում, ապա կետագրությունը շարունակում է մնալ ավանդական ձևերի մեջ:

Նոր հայերենի կետագրության նորմերը ամենից ավելի հանգամանորեն տրվել են Մ. Աբեղյանի կողմից՝ 1892 թ.² Սրանք մասնակի փոփոխությամբ, մասնավորապես ռուսական կետագրության կանոնների հաշվառմամբ, ներկայացված են Գ. Սևակի հայոց լեզվի շարահյուսության դպրոցական դասագրքում³ և 1943 թ. հաստատվել են ՀԽՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր գրքում⁴ և 1943 թ. հաստատվել են ՀԽՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր գրքում⁵ և 1943 թ. հաստատվել են ՀԽՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր գրքում⁶ և 1943 թ. հաստատվել են ՀԽՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր գրքում⁷:

Հայոց գրական լեզվի զարգացման արդի փուլում ոչ միայն նկատվում են կետագրական կանոնների ձևավորման և կիրառության անհետևողականություններ, այլև զգացվում է կետագրության տեսության հիմունքների մշակման անհրաժեշտություն: Մի կողմից՝ ավանդույթի ուժը և մյուս կողմից՝ ռուսական կետագրական կանոնների մեխանիկական ընդօրինակումը հասցրել են կետագրության սկզբունքների անհատականության: Առանց տեսական իմաստավորման չի կարող ստեղծվել կետագրության քիչ թե շատ անհակասական համակարգ, չեն կարող ամուր միասնական հիմքերի վրա դրվել կետագրական նշանների կիրառության կանոնները:

Ռուսական լեզվաբանության մեջ տարբերում են կետագրության հիմունքների որոշման երեք ուղղություն՝ 1) տրամաբանական-իմաստային, որ կետագրության նպատակն է համարում մտքերի ճշգրիտ արտահայտությունը, 2) շարահյուսական, որ կետագրության դերը հանգեցնում է շարահյուսական հարաբերությունների, խոսքի և հատկապես նախադասության կառուցվածքի բացահայտմանը, և 3) հնչերանգային, ըստ որի կետագրությունը ծառայում է նախադասության հնչերանգային առանձնահատկությունների դրսևորմանը⁷:

Իրականում, ինչպես կտեսնենք, կետագրության դերի գնահատման այս երեք հայեցակետերը սերտորեն կապված են, և դրանք պետք է գնել ոչ թե կողմ-կողքի, այլ քննել որոշակի ստորադասական հարաբերության մեջ. նախադասության հնչերանգային կառուցվածքը կապված է նրա շարահյուսական կառուցվածքի և վերջին հաշվով արտահայտվող բովանդակության (մտքերի, կամքի, զգացմունքի) բնույթի հետ: Այս բանը ժամանակին լավ հասկանում էր Թրակացին, ըստ որի արտահայտելիքը պայմանավորում է արտահայտության եղանակը, որի հնչական և գրավոր տեսակների միջև որևէ խղում նա չի նկատում:

Կարելի է ասել, որ շարահյուսական կառուցվածքը հանդես է գալիս որպես բովանդակության ու արտահայտության կողմերի յուրատեսակ միացնող օղակ, և կետագրության կանոնների սահմանման ժամանակ պետք է նկատի ունենալ երեք կողմերի փոխկապակցվածությունը, չանտեսել նրանց ներքին օրգանական կապը, շառաջնորդվել մերթ մեկ, մերթ մյուս կողմով, փոխկա-

² Մ. Աբեղյան, Հայոց լեզվի ուղղագրությունը, Թիֆլիս, 1892, էջ 85—106:

³ Գ. Սևակ, Հայոց լեզվի շարահյուսություն, Երևան, 1937:

⁴ Ս. Ղադարյան, Ուղեցույց տեղանշանական կոմիտեի որոշումների, Երևան, 1945, էջ 56—64:

⁵ Ս. Աբրահամյան, Հայոց լեզու (շարահյուսություն), Երևան, 1984:

⁶ Հայերենի կետագրության պատմության մասին տե՛ս, բացի 1-ին ծանոթության մեջ հիշատակվածներից, Ա. Գ. Աբրահամյան, Հայոց դիր և գրություն, Երևան, 1978, Ծ. Ի. Բաղդասարյան, Հայերենի կետագրությունը, Երևան, 1972, 2. Մխիթարյան, Հայերենի կետագրության համառոտ պատմություն, Երևան, 1972:

⁷ Հմմտ. Դ. Զ. Розенталь, М. А. Теленкова, Справочник лингвистических терминов, М., 1972, с. 321—323.

պակցվածությունը չվերածել է կլեկտիկ կապի: Պետք է հիշել նաև, որ թեև դրավոր խոսքը թափանցյալ է բանավորի համեմատությամբ, միջնորդված նրանով, բայց կան դեպքեր, երբ գրավոր նշաններն ինքնուրույն արժեք ունեն. նրանց միշտ չէ որ համապատասխանում են որոշակի հնչական առանձնահատկություններ (հմմտ. չակեխտների գոթածածկությունը). նշանակում է՝ միայն հնչմամբ առաջնորդվելու դեպքում հնարավոր չի լինի սահմանել ընդհանրական կանոններ:

Ժամանակակից հայերենի կետագրության կանոնները մշակողները հենվում են գերազանցապես շարահյուսության վրա, և պատահական չէ, որ կետագրական կանոնները տրվում են շարահյուսական դասագրքերում: Հիմնականում ելնելով նախադասության կառուցվածքային առանձնահատկություններից, այդ կանոնները, բնականաբար պահանջում են շարահյուսության կանոնների սպառիչ և անբասիր իմացություն, որին հասնելը բավականաչափ դժվար է:

Կետագրական կանոնների մշակման ժամանակ անհրաժեշտ չափով հաշվի չեն առնվում, ժամանակակից որոշ լեզվաբանների տերմինաբանությունները ասած, «խոսողի քերականության» և «լսողի քերականության» տարբերությունները: Եվ իրոք. ո՞ւմ շահերից է ելնում հայերենի կետագրության արդի համակարգը՝ գրողի, թե՛ ընթերցողի. ուզում է հեղտացնել գրողի, թե՛ ընթերցողի գործը: Մեր կետագրության կանոնները մշակողները կարծեք թե այս հարցի մասին ընդհանրապես չեն էլ մտածում: Եթե նկատի ունենանք, որ մի կողմից՝ խիստ կանոնարկված և մանրամասնված կետագրությունը դժվարացնում է գրողի գործը և որոշ չափով կաշկանդում ընթերցողին, գեղարվեստական երկի գրման, ընկալման և վերարտադրության ժամանակ թուլացնում երևակայության և ստեղծագործության դերը, մյուս կողմից՝ պակասավոր կետագրությունը դժվարացնում է ընթերցողի կողմից տեքստի ճիշտ ընկալումը, ապա կհանգենք այն պարզ եզրակացությանը, որ պետք է ընտրել ոսկե միջինը, թույլ տալ կետագրության որոշ ազատություն, միջոցների ընտրության հնարավորություն:

Ինչպես երևաց նախորդ շարադրանքից, և ինչպես հայտնի է լեզվաբանական տեսությունից, կետագրական նշանները, լեզվական այլ նշանների նման, պետք է ունենան և իրոք ունեն իրենց արտահայտության և բովանդակության պլանները: Սակայն կետագրական նշանների արտահայտության և բովանդակության պլանների հարցը սովորական նշանների համեմատությամբ ավելի բարդ է:

Նախ՝ եթե գրային խոսքը բանավոր (հնչական) խոսքի համեմատ դիտենք որպես երկրորդային, ապա դուրս կգա, որ դրանք ոչ թե սովորական նշաններ են, այլ նշանների նշաններ. այլ կերպ ասած՝ միևնույն բովանդակությունը կարող է արտահայտվել և՛ բանավոր, և՛ գրավոր ձևով, ընդ որում գրավոր արտահայտությունը սովորաբար հենվում է բանավորի վրա, նպատակ ունի ճիշտ ներկայացնել նրա առանձնահատկությունները: Այս դեպքում գրավոր նշանների բնույթը հասկանալու համար, անհրաժեշտություն է զգացվում դիմելու հնչական համապատասխան միջոցներին: Սակայն գրավոր խոսքի՝ մեր ժամանակներում ստացած կարևորությունը հաճախ հասցնում է այն բանին, որ գրավոր խոսքը զգալի չափով անկախանում է բանավորից, և գրավոր նշանների՝ բովանդակային կողմի հետ ունեցած հարաբերությունը դառնում է անմիջական, կետագրական որոշ նշաններ էլ կապվում են բովանդակության հետ առանց բանավորի միջնորդության:

Երկրորդ՝ կետագրական նշանների բովանդակային կողմը հավասարաթեք չէ սովորական բառային նշանների բովանդակային կողմին: Երբ կետագրության գերի տրամաբանական-իմաստային գնահատման ներկայացուցիչները խոսում են այն մասին, որ կետագրությունը նպատակ ունի նպաստելու արտահայտվող մտքերի, ցանկությունների, զգացմունքների ճշգրիտ

արտահայտմանը, այսինքն՝ առաջին տեղը տալիս են բովանդակային կողմին, հարց է առաջանում՝ իսկ ի՞նչ բովանդակային տարրերի արտահայտման հետ են կապված կետադրական նշանները, լինեն դրանք հնչական նշանների միջնորդությամբ, թե առանց դրանց։ Ակնհայտ է, որ այդ իմաստները ոչ թե նախադասությունների մեջ արտահայտվող օբյեկտիվ-անմիջական իմաստներ են, այլ առաջին հերթին սուբյեկտիվ՝ խոսքի իրադրության, հաղորդակցման կողմերի հետ կապված, եղանակավորության իմաստներ։ Որոշ դեպքերում էլ «բովանդակություն» տերմինը պայմանական է, և նշանների գործածությունը ձևականացված։ այստեղ որպես «բովանդակություն» են հանդես գալիս օբյեկտիվ բովանդակության խոսքային դրսևորումների կառուցվածքային առանձնահատկությունները։

Կետադրական նշանների արտահայտության պլանը, եթե այս անվան տակ նկատի ունենանք նրանց արտաքին և քանակական կողմերը, համապատասխան լեզվական բովանդակություն արտահայտելու համար պետք է ունենա որոշակի քանակ և տարբերակվածություն՝ հակադրությունների որոշակի համակարգով։ Ուրախ՝ ռացիոնալ է այդ համակարգը, նշենք, որ հայերենի կետադրական նշանների համակարգը, ինչպես լեզվական այլ համակարգեր, հեռու է իդեալական լինելուց՝ ըստ նրա կազմավորման պատմական պայմանների ու առանձնահատկությունների և նշանները ներմուծողների ըմբռնումների։ Այստեղ էլ մենք ունենք բովանդակության և արտահայտության անհամապատասխանություններ՝ «համանունության» և «համանիշության» դեպքեր, «բազմիմաստության» և հավելուդայնության երևույթներ։ Այլ կերպ ասած, միևնույն նշանը կարող է արտահայտել իրար մոտ կամ իրարից լիովին տարբեր բովանդակություններ, այսինքն՝ լինել բազմիմաստ կամ համանուն, միևնույն կամ մոտ բովանդակություններ կարող են արտահայտվել տարբեր նշաններով, այսինքն՝ լինել նույնանիշ կամ համանիշ, կետադրական նշանների բազմիմաստությունը և համանունությունը հնարավորություն են տալիս ընդգրկել շատ ավելի մեծ քանակությամբ դեպքեր, քան թույլ կտար նշանների եղած քանակը բովանդակային և արտահայտական կողմերի ուղղագիծ համապատասխանության դեպքում։ Ինչպես շաղկապները, կետադրական նշանները ևս կարող են լինել միակի և զուգակից, բուն զուգակից են փակագծերը և շակերտները, երկրորդաբար զուգակից նշանների արժեք կարող են ստանալ ստորակետները՝ կոշակների, միջանկյալ միավորի, տրոհվող անդամի անջատման դեպքում (հմտ. և, թե շաղկապների զուգակից գործածությունը՝ և'... և', թե'... թե')։

Նշանները արտաքին տեսքով որոշ դեպքերում լիովին պայմանական են (հմտ. շակերտներ, փակագծեր և այլն), որոշ դեպքերում հարմարեցված ձայնի հատկությունների արտահայտմանը՝ նմանեցման միջոցով։ Այս կապակցությամբ նշենք, որ կետադրական նշանների մեջ էլ կա, այսպես կոչված, սիմվոլայնության երևույթ, այսինքն՝ իմաստի և ձևի միջև որոշ համապատասխանություններ, ինչպես բառերի քննաձայնականության դեպքում։ այսպիսիք են, օրինակ, առոգանության նշանների որոշ տարբերություններ, որոնք նպատակ ունեն արտահայտելու ձայնի փոփոխության տարբերությունները։ Որոշ շափով այսպիսին են գծիկի և անջատման գծի, միջակետի և վերջակետի, փակագծերի, բազմակետերի ձևերի և արտահայտած իմաստների տարբերությունները։

Քննենք կետադրության նշանների արտահայտության պլանը ավելի հանգամանորեն։ Հայերենի կետադրական նշանները տասնհինգն են, եթե նկատի չառնենք գրեթե ինքնուրույն արժեք ունեցող նրանց որոշ կապակցությունները (հմտ. ստորակետ-գիծը)։ ըստ պայմանական անվանումների տարբերում են «տրոհության» շորս նշան՝ վերջակետ (.), միջակետ (.), ստորակետ (,) և բուլ ('), 2) «առոգանության» երեք նշան՝ շեշտ ('), հարցական նշան կամ պարույկ (") և երկարության նշան ('), 3) «բացահայտության» ութ նշան՝ շակերտներ (« »), փակագծեր (()), անջատման գիծ (—), ձիռության գծիկ (·), ենթամաս (-), կախման կետեր (երեք կետ ...), բազմ-

կանորեն սրանց համապատասխանում են ձայնի տեղության, բարձրության և ուժգնության փոփոխությունները:

Կախման կարգի տարբերություններ են դրսևորում, միացած նյութական արտահայտության կարգի հետ, «տրոհա-միացական» նշանները. եթե մի կողմ թողնենք տրոհա-միացական արժեք ունեցող միջտառային և միջբառային բացատները և նկատի առնենք բուն կետադրական նշանները, ապա վերջիններս կարելի է դիտել որպես կախման կարգի հիմնական (→), հակադիր (←), փոխադարձ (↔) և միջին (↔) եզրերից հատկապես փոխադարձ (↔) եզրի տարբեր դրսևորումներ՝ բացառությամբ վերջակետի, որին բացարձակ արժեքի դեպքում կարելի է վերագրել դասի կարգի հակադիր եզրի (←) արտահայտություն (այսինքն՝ վերջակետն առնել բացարձակ վերջնային դիրքում, այլապես, նախադասության հաջորդելու դեպքում, այն կարող է կապակցական արժեք ձեռք բերել ցույց տալով նախորդող և հաջորդող նախադասությունների փոխկախումը): Այս դեպքում առաջին շորս նշանի համար մենք կունենանք փոխադարձ եզրի՝ փոխկախման դրսևորման 4 աստիճան (կամ, ըստ համընդհանուր լեզվական կաղապարի, չափ), որոնցից ենթաման և միության գծիկը կարտահայտեն ներբառային, իսկ ստորակետը և միջակետը՝ ներնախադասական կապերը:

Այս նշանները հնչական առումով կարտահայտեն տեղության կարգի տարբեր դրսևորումներ, որոնց բուն տեղական արժեքը կլինի ոչ թե բացարձակ, այլ հարաբերական՝ փոխադարձ հարաբերությունից կախված:

Վերջապես, կազմի կարգի տարբեր եզրերը՝ հավելում (→), բացառում (կրճատում, զեղչում՝ ←), փոխարինում (↔), նյութական արտահայտության կարգի զուգակցությամբ հանդես են գալիս հիմնականում «բացահայտության», երբեմն էլ այլ տիպի նշաններով: Բուն մտքի նկատմամբ հավելյալ միտքը, բացառությունը, կարծիքը, գնահատումը արտահայտվում են փակագծերով կամ ստորակետներով. կրճատումը և զեղչումը՝ միջակետով, բազմակետերով, բունով. փոխարինումը (իմաստի փոխարինում՝ հակառակ իմաստով, հեղանք, պայմանական իմաստ, միևնույն իմաստն արտահայտող կապակցության փոխարինում մի ուրիշով որպես բացատրություն)՝ չակերտներով: Հնչական առումով որոշ նշաններ (բուն կրճատման նշանները, չակերտները) կարող են հնչական հատուկ զուգահեռներ չունենալ կամ դրսևորվել դադարի և հնչերանգի տարբերություններով:

Ինչպես նշվել է, ներկայումս ըստ ավանդույթի ընդունված է կետադրական նշանները բաժանել երեք խմբի՝ 1) «տրոհության», 2) «առողանության» և 3) «բացահայտության»: Այս բաժանումը և տրված անվանումները պայմանական են հատկապես երկու նկատառումով. 1) այստեղ չկա բաժանման սկզբունքի միասնականություն, «տրոհություն» անվանումը հենված է հնչական և շարահյուսական հատկանիշների վրա, ընդ որում նկատի է առնվում նշանների միայն տրոհական արժեքը, մինչդեռ շատ դեպքերում ավելի կարևոր է նրանց միացական արժեքը. «առողանության» անվանումը ելնում է նշանների հնչական և ոչ թե գործառական արժեքից. «բացահայտության» անվանումը պիտի իմաստային հիմն ունենար և նկատի առներ իմաստային կողմը՝ իմաստների բացահայտում, բայց իրականում լինի պայմանական է, և նրա տակ բերվող նշանները՝ գործառապես խիստ տարբեր. այստեղ փաստորեն դրված են այն բոլոր նշանները, որոնք ըստ բաժանման հեղինակների ըմբռնման չեն կարող տեղավորվել մյուս խմբերի մեջ. 2) կետադրական նշանների բաշխումն ըստ երեք խմբերի զգալի չափով պայմանական է. կան նշաններ, որոնք զուգակցում են, ինչպես նշվել է, մեկից ավելի խմբերի հատկանիշներ, բայց բերվում են մեկ անվան տակ, ընդ որում առաջնային (անփոփոխակալին) և երկրորդային (փոփոխակալին)՝ գործածությունները ոչ միշտ են հստակ տարբերվում:

Նկնելով կետադրական նշանների գործառական (բովանդակային) արժեքից՝ ըստ վերևում կատարած վերլուծության արդյունքների, սակայն ժառանգորդականությունը չխզելու նպատակով որոշ տուրք տրվում ավան-

դուլթին՝ կարելի է տարբերել հետևյալ խմբերը. 1) փոխկախական, 2) հաղորդակցային, 3) եղանակավորային և 4) կրճատման: «Եղանակավորային» բառն այստեղ գործածված է որոշ պայմանականությամբ՝ ընդգրկելով այն բոլորը, ինչ կապված է խոսքի հեղինակի վերաբերմունքի և ակտիվության: դրսևորումների հետ. այստեղ մենք դնում ենք նաև կազմի կարգի եղանակային դրսևորումները:

1) Փոխկախական նշանները առանձին-առանձին առնված իրոք ցույց են տալիս խոսքի տարբեր հատվածների փոխկախումը (փոխհարաբերությունը). իսկ իրար նկատմամբ առնված՝ լեզվական միավորների ստորադասության տարբեր աստիճանները. այսպես, վերջակետն օգտագործվում է ավելի բարձրակարգ միավորների (ավարտուն նախադասությունների) փոխկախումն ու սահմանազատումն արտահայտելու համար, քան ստորակետը: Իրենց գործառական արժեքով փոխկախման նշանները մոտենում են շաղկապներին՝ հաճախ փոխարինելով և ուղեկցելով նրանց: Այս տիպի բնույթն ավելի ակնհայտ էլինի, եթե նկատի ունենանք, որ համապատասխան հնչական միջոցները՝ դադարի տարբեր աստիճանները, միացած հնչերանգային տարբերությունների հետ, փաստորեն շաղկապական գործառույթ են կատարում՝ ընդհանուր ձևով արտահայտելով այն, ինչ շաղկապներն արտահայտում են մասնավորված կերպով՝ հարաբերության տիպերի որոշակի մատնանշմամբ:

Կարելի է առանձնացնել փոխկախման երեք կարգի միջոցներ՝ բառային, նախադասական և տեքստային: Տեքստային միջոցների քննարկումը դուրս է մեր նպատակից, ուստի նրանց մասին կխոսենք հպանցիկ կերպով: Տեքստային միջոցներն են ընդարձակ բացատները (նորոտողային բացատը՝ պարբերության դեպքում, միջտողային բացատը՝ տեքստի որոշ ինքնուրույն հատվածների միջև), թվանշանների, դասական թվականների և «գլուխ», «մաս», «բաժին», «հատոր», «գիրք» բառերի կապակցությունները, թվանշանների և պարագրաֆի նշանի միացությունները, աստղանիշերը և պայմանական այլ նշանները, նկարազարդումները, «վերջ» բառի գործածությունը:

Բառային փոխկախման միջոցներն են միջտառային բացատը և «բացահայտություն»: Նշանների մեջ դրվող ենթամասն ու միության գծիկը: Նախադասական փոխկախման միջոցներն են բառային բացատը և, այսպես կոչված, տրոհության բուն նշանները, մասնավորապես ստորակետը, միջակետը և վերջակետը: Թեև այս դեպքում խոսում են տրոհության մասին, բայց նույն իրավունքով կարելի է խոսել միացման կամ կապակցման մասին. յուրաքանչյուր ստորակարգ տրոհիչ միացական արժեք ունի բարձրակարգ տրոհիչ հարաբերությամբ, այսինքն՝ տրոհում է նախորդ միավորը նույնակարգ հաջորդ միավորից և միաժամանակ ցույց տալիս այդ երկուսի կապը՝ բարձրակարգ միավորի ներսում: Միևնույն իրավունքով կարելի է ասել՝ «այս նշանը դրվում է այսինչ միավորների միջև»:

Միասնաբար առնելով բառային և նախադասական փոխկախման միջոցները՝ կունենանք սրանց ստորադասական հարաբերության յոթ աստիճան՝ 1) միջտառային բացատ՝ տառերի միացման նշան, 2) ենթամասն՝ մասնկերի երեքմե էլ ձևերի միացման նշան, որ հանդես է գալիս միայն տողադարձի ժամանակ, 3) միության գծիկ՝ երկու սերտ միասնության (մեկ բառային արժեքի) նշան, 4) բառային բացատ՝ բառերի անջատման նշան, 5) ստորակետ՝ նախադասության բաղադրամասերի՝ շարույթների և պարզ նախադասությունների անջատման նշան, 6) միջակետ՝ նախադասության ծավալուն (սովորաբար ստորակետ(ներ)ով օժտված) բաղադրամասերի անջատման նշան՝ երեքմե եղանակավորության լրացուցիչ իմաստով հանդերձ, 7) վերջակետ՝ նախադասության ավարտի նշան: Նշենք, որ միջակետը և ստորակետը պիտի դրվի ստորակետների ունեցող հատվածների միջև, բայց ներքեմն դրվում է ստորակետների փոխարեն՝ շեղելով անջատական ար-

յեքը: Երկրորդաբար կապակցային արժեք կարող են ձեռք բերել այլ նշաններ՝ կախման կետերը և բազմակետերը, բուլբը, փակագծերը:

Եթե մի կողմ թողնենք բացատները և նկատի առնենք կետադրական բուն նշանները՝ կունենանք հինգ աստիճանի նշան՝ 1) ենթամաս (-), 2) միության գծիկ (-), 3) ստորակետ (.), 4) միջակետ (.) և 5) վերջակետ (:): Պայմանականորեն վերագրենք առաջին երկուսին միացական, հաջորդ երկուսին՝ անջատա-միացական և վերջինին՝ անջատական արժեք:

2. Հաղորդակցային նշանները նպատակ ունեն արտահայտելու հաղորդակցման ակտի հետ կապված գործառական արժեքները: Սրանց մեջ գերվում են, այսպես կոչված, առգանուկային նշանները՝ պարուկը (հարցական նշանը (?), շեշտը (!) և բացականչության նշանը (!), «բացահայտության» նշաններից անջատման գիծը (—) և ստորակետ-գիծը (,—) (վերջինիս ըստ սահմանադրամասն բնույթի կարող են մի ծայրում փոխարինել միջակետ-գիծը և վերջակետ-գիծը), չակերտները (« »): Այս նշաններից պարուկը արտահայտում է հարց (իմանալու ցանկություն), շեշտը ցույց է տալիս համոզված պատասխան, հրաման, ուղարկության հրավիրում կամ ընդգծում հաղորդման կարևոր հատվածները (տրամաբանական շեշտ), բացականչության նշանը՝ բացականչություն (հատկապես զգացմունքի և ցանկության արտահայտություն՝ հաղորդակցության 0 եզր, եղանակավորության → և ← եղերը): Անջատման գծերը ծառայում են երկխոսության կողմերի խոսքերի տարբերմանը՝ մի խոսող—մի ուրիշ խոսող անցումով: Ստորակետ-գիծը մեջբերում է հեղինակի խոսքը, որ միջադաս լինելու դեպքում վերջում նույնպես կարող է ունենալ ստորակետ-գիծ (կամ, ըստ անհրաժեշտության, միջակետ-գիծ և վերջակետ-գիծ): Չակերտները ծառայում են մենախոսության առանձնացմանը կամ ուրիշի ուղղակի խոսքի մեջբերմանը:

3. Եղանակավորությունը մի կարգ է, որ խոսքի հեղինակի միջոցով արտահայտում է իրականության և հոգեկան երևույթների փոխհարաբերությունը, ցույց տալիս խոսքի հեղինակի վերաբերմունքը, բովանդակության նրա ընկալումը, գնահատումը և ներկայացումը: Այստեղ եղանակավորության անվան տակ միավորվում են մի շարք նշաններ, որոնք մինչև հիմա դրվել են «բացահայտության» նշանների մեջ՝ փակագծերը (()), բուլբը ('), չակերտները (« »): Սրանցից փակագծերը արտահայտում են խոսքի հեղինակի միջամտությունը խոսքին, խոսքի անմիջական ընթացքի հետ չկապված հեղինակային հավելումը՝ միջանկյալ կարծիք, միտք, տեղեկություն, բացատրություն. սա հաճախ ներկայացվում է որպես խոսքի որևէ հատվածի առանձնացում («տրոհում», обособление), երբեմն նրա վրա ուղարկությունը գրավելու նպատակով: Բուլբը ցույց է տալիս խոսքի հեղինակի տրամաբանական ակտիվությունը. որևէ արտահայտված բան նա կարող է փոխարինել համարժեք արտահայտությամբ՝ բացատրել, մեկնաբանել, թվարկման կամ օրինակի միջոցով մասնավորել: Չակերտները արտահայտում են նրանցով օժտված միավորի խոսքի հեղինակի կողմից որպես պայմանական ներկայացվելը՝ նրա հեղինակը, նրա կողմից հակառակ իմաստ դնելը: Նշենք, որ այս բոլոր նշանները դադար են արտահայտում և հնչական արժեքով մոտենում փոխկախման («տրոհության») հնչիկին, երբեմն փոխարինում նրանց կամ փոխարինվում նրանցով: Զգացմունք և ցանկություն կարող են արտահայտել կախման կետերը, որոնք բուն արժեքով հատկացվում են կերպարան նշաններին, ինչպես նաև բացականչության նշանը, պարուկը, շեշտը, որոնք առաջնային արժեքով հատկացվում են հաղորդակցային նշաններին: Փակագծերը կարող են փոխարինվել ստորակետներով կամ ստորակետ-գծերով՝ առանձնացման տարբեր աստիճանները արտահայտելու համար: Բուլբը, որ սկզբնապես առգանուկային նշան է եղել և որպես ձայնի լրացման արտահայտիչ հակադրվել շեշտին, այժմ իր բուն արժեքի հետ միասին ունի «տրոհության» նշանի արժեք և սովորաբար դրվում է տրոհության նշանների մեջ, մասնավորապես որ այն հաճախ կարող է դրվել նաև երկու միավորների միջև՝ իմաստային շփոթությունը կանխելու նպատակով կամ

որպես որևէ անդամի զեղչման նշան: Վերջապես, նշենք, որ շակերտներն ունեն նաև հաղորդակցային նշանների արժեք. նրանցով կարող է արտահայտվել ուրիշի ուղղակի խոսքը և մենախոսությունը:

4. Բնատման նշանները երկու տեսակ են՝ գրավոր կրճատման և բանավոր կրճատման: Առաջին տիպի նշանները արտահայտում են տեքստի առանձին հատվածների՝ գրավոր խոսքի մեջ կատարվող կրճատումները: Երկրորդ տիպի նշանները արտահայտում են նաև բանավոր խոսքում կատարվող կրճատումները: Գրավոր կրճատման նշանները հայերենում երկուսն են՝ միջակետ (.), որ ցույց է տալիս բառի կրճատումը, և բազմակետեր (...), որոնք ցույց են տալիս տեքստի առանձին հատվածների կրճատումները: Բանավոր կրճատման նշաններն են բուլթը ('), որ ցույց է տալիս ըստ տեքստի բնույթի ինչ-որ (կրկնվող) բառի կրճատված լինելը՝ «Ես գնացի ամս, իսկ նա՝ դպրոց» (իմա՝ գնաց), և կախման կետերը (...), որոնք ցույց են տալիս խոսքի կիսատ մնալը, ոչ սովորական կրճատումը: Արևմտահայ տեքստերում հանդիպում է նաև ապաթարցը (')' հնչյունային կրճատումները նշանակելու համար՝ թե հավել մ'ալ (կրճատված է Ը-ն):

Արտահայտենք կետադրական նշանների խմբերը իրենց բովանդակային և հնչական արժեքներով հանդերձ համապատասխան աղյուսակներով:

1. Փոխկախական նշաններ

Արտահայտվածք (գործառնական արժեք)	Հնչական արտահայտություն	Գրային արտահայտություն	
		հիմնական (անփոփոխական) նշան	երկրորդային (փոփոխական) նշան
1	2	3	4
1. միացություն	կցույթ (դադարի բացակայություն)	1. ենթամիաս (-)	
2. արոհամիացություն	դադարամերձ կցույթ դադար՝ սողասողական հընչերանդով նախորդից ավելի մեծ դադար՝ սողասողական հնչերանդով	2. միության դժիկ () 1. ստորական (.) 2. միջակետ (.)	բուլթ (')
3. արոհում	դադար՝ ավարտական հնչերանդով	վերջակետ (.)	կախման կետեր (...) բազմակետեր (...)

2. Հաղորդակցային նշաններ

1	2	3	4
1. հարց	հարցական առողանույթ (տոնի բարձրացում՝ երկարացմամբ)	հարցական նշան (?)	
2. ուղղորդական հրավերում (կոչականացում). հրաման. վճռական պատ.	ընդտային առողանույթ (ձայնի բարձրացում՝ ուժղնություն և երկարություն աճով)	ընդուն (')	
3. երկխոսություն	ձայնի անհատական տարբերակում	անջատման գիծ (-)	
4. հեղինակային խոսքի ներմուծում	հեղինակային ձայն՝ հարթ տոնով	ստորական-գիծ (երմեմն էլ միջակետ-գիծ կամ վերջակետ գիծ) (,-)	
5. մենախոսություն և մեջբերում	ձայնի փոփոխություն	շակերտներ (<>)	
6. դրացմունքի և ցանկություն ինքնարտահայտություն	բացականչական առողանույթ (ձայնի երկարացում՝ տոնի բարձրացումով)	բացականչություն. նշան կախման կետեր ('') (...)	

3. Եղանակավորային նշաններ

1	2	3	4
1. հեղինակային հավելում (միջամասնություն՝ լրացուցիչ կարծիք, զնահատում, տեղեկություն, բացատրություն)	դադար(ներ)՝ միջին հարթ տոնով	փակագծեր (())	ստորակետներ (....), (վերջակետից առաջ վերջին ստորակետը չի զրկում) ստորակետ-գլուխ (—.....)
2. իմաստահամարժեքային փոփոխություն (մեկնություն, պարզարանում, մասնավորում, մասավարկում, օրինակ)	դադար՝ սպասողական հնչերանդով	բռնք (')	միջակետ (ավելի մեծ հատվածների դեպքում) (.)
3. իմաստային պայմանականություն թյան ընդդեմում (այդ թվում՝ հեղինակ, հակասակ իմաստ)	դադար՝ սովորական կամ երանդավորված հնչերանդով	ակերաններ (») (»)	

4. Կրճատման նշաններ

1	2	3	4
1. Բառամասի կրճատում	խոնի կրճատ կամ լրիվ արտասանություն	միջակետ (.)	
2. կրկնվող բառի կրճատում (դեղնում)	դադար՝ իջնող հնչերանդով	բռնք (')	
3. հաղորդման թևախառն	դադար՝ ձայնի երկարաց.	կախման կետեր (...)	
4. տեքստի կրճատում	դադար	բազմակետեր (....)	
5. հնչյունի կրճատում	դադարի բացակայություն	ապաթարց (')	

ИСТОРИЧЕСКИЕ И ТЕОРЕТИЧЕСКИЕ ОСНОВЫ
АРМЯНСКОЙ ПУНКТУАЦИИ

Г. Б. ДЖАУКЯН

Р е з ю м е

Основные правила употребления знаков препинания, восходящих к V в., были сформулированы в XII—XIII вв., с тех пор претерпев лишь незначительные изменения. Из трех возможных подходов к роли этих знаков в языке—семантического, синтаксического и фонетического—в настоящее время преобладает синтаксический. Имея в виду необходимость установления внутренней связи между ними и исходя из их сущности как знаков, проводится их классификация по «плану выражения» и «плану содержания». По семантико-функциональной значимости (по «плану выражения») устанавливается четыре класса знаков препинания по первичному употреблению: 1) знаки взаимозависимости (связи отрезков текста): а) уen^camna—знак переноса (-); б) miut yan gsfk—«соединительная черточка (дефис)» (-); в) storakef—запятая (,); г) miſakef—средняя точка (.); д) verjaket—«конечная точка» (:); (В армянском языке по функциональной значимости «средняя точка» соответствует точке с запятой и двоеточию и «конечная точка»—точке); 2) коммуникационные знаки: а) hars^cakan psan—вопросительный знак (?); б) šešt—ударение ('); в) bas^cakan-ſ^cakan psan—восклицательный знак (!); г) glc—тире (—); д) storaket-glc—запятая с тире (,—); 3) знаки «модальности»: а) p^cakager—скобки (()); б) bul^c—знак тяжелого ударения, приобретший новую функцию ('); в) čakeriner—кавычки; 4) знаки сокращения: а) kef—точка (.); б) bazmaketer—многоточие (...); в) kaxman keter—знак

незавершенности предложения (...); г) *apat' arc'* —апостроф (') (употребляется в западноармянских текстах).

HISTORICAL AND THEORETICAL BASIS OF ARMENIAN PUNCTUATION

G. B. DJAHUKIAN

S u m m a r y

The basic rules of punctuation marks application ascending from the V c., were formed in XII—XIII cc., since then undergoing slight changes. From three possible approaches to the role of these marks in the language—semantic, syntax and phonetic—at present syntax predominates. Bearing in mind the importance of the inner connection arrangement between them and proceeding from their essence as marks, their classification by "the plan of expression" and "the plan of contents" is pursued. By the semantic-functional importance (by "the plan of expression") four classes of punctuation marks by initial application are determined: 1) marks of interdependence (connections) of text pieces: a) *yent'amna*—mark of transfer (↪); b) *mlut'yan gclik*—hyphen (—); c) *storak'et*—comma (,); u) *mljaket*—"middle dot" (·); e) *verjaket*—"final dot" (:) (in Armenian language in functional meaning "middle dot" corresponds to dot with comma and colon and "final dot"—to dot); 2) communications marks: a) *harc'akan nšan*—note of interrogation (?); b) *šešt*—stress ('); c) *bac'akanč' akan nšan* note of exclamation (!); d) *glc*—dash (—); e) *storaket—glc*—comma with dash (,—); 3) marks of "modality": a) *p'akagcer*—brackets (()); b) *but'*—mark of heavy stress, which gets a new function ('); *č'aktertner*—quotation marks (""); 4) abbreviation marks: a) *ket*—dot (•); b) *bazmaketer*—dots (...); c) *kakhman keter*—marks of an unfinished sentence (...); d) *apat' arc'*—apostrophe (') (is applied in west Armenian texts).